891.99
Z-76
ՍՏՈՒԳՎԱԾ Է 1981 Թ.

# ՎԻՊԱ
## ՍԱՆՈՒԹԻՒՆ՝

զերկնային
մարմնոց շարժ
մանէ, զլուսա
ւորացն՝ որ 'ի
նմա, և զհաս
տատութենէ
երկրի։

Զքեզ աղաչեմ ով տէր Թէ ... ռուա.
լեր ձեռնտու ... լուա.

# ՏԵՏՐԱԿ
# ՀԱՄԱՌՕՏԵԱԼ
## ԻՄԱՍՏՆԱԽՈՀ ԲԱՆԻՒՔ.

Արարեալ Հոգելից և Իմաստուն Վարդապետին Յօ հաննիսի Երզնկացւոյ, որ և ասի Ծործորեցի. սակս զանճառելութեան արարչագործութեանն Ա.Յ, և յաղագս Թուոց երկնից, շարժման լուսաւորաց, կարգի տարերաց եղանակաց տարւոյ, և այլոց իրաց բնականաց. 'ի խնդրոյ զուարթամիտ պատանւոյն Վաղթանկայ կրտսեր որդւոյ Հռչակաւոր Իշխանին Հայոց՝ Աթկայ. Յամի տեառն 1284. Եւ 'ի Թուականութեան Հայոց, ՉԼԳ.

Տպագրեալ 'ի Հայրապետութեան՝ Լուսանկար Մօրն Աթոռոյ՝ Սբյ Գահոյն Էջմիածնի՝ Տն ՂՈՒԿԱՍՈՒ Սրբազնագոյն Կթղկսի Ամ Հայոց.

Հրամանաւ՝ Սբյ Աթոռոյն Էջմիածնի Ծայրագոյն Նուիրակի և Հիւսիսային կողմանս եղեալ ազգիս Հայոց՝ Առաքելաշնորհ Առաջնորդի Սահմանակցի Երկնայնաբարուն Արղութեան՝ Իշխան ազնւոյ Տն Յովսեփայ Սրբազան Արք Եպիսկի, և Հիմնադրի նոր Նախիջևանու և Գրիգորոպոլու Քաղաքացն Հայոց.

Արդեամբք և ծախիւք՝ 'ի Հոգւոյ 'ի Մոսկուա բնակեալ Մե- ծատանն և [illegible].

Յամի Տն 1792. Դեկտեմբերի 17.

'Ի տպարանի Նորին Բարձր Սրբազնութեան.

Ընդ Հովանեաւ Երկնաշնորհ Սբ Խաչ Վանիցն, որ 'ի Նորն

ՆԱԽԻՋԵՒԱՆ.

## Յառաջաբանութիւն առ բարեմիտ ընթերցողս.

Ահաւասիկ մատուցանեմ խնամատարնեաց մանկանցդ հայկազունեաց՝ գիրս փոքրիկ՝ Աշխատասէր Մի Աշխարհականի մերոյ՝ Ներսեսեան Յօհաննէս Տէրմինասեանց, որ և կոչի Հայրապետեան.

Որդ՝ եթէ կայն ՚ի ձեզ սիրահարուէք ծանօթութեանց գրութեան երկնային կամարաձև և խորանանման՝ բառ գաւթայ, և շլացանց նորին, կարէք այսու դիւրաւ լինել հասու. իբրև զտանալ՝ մեծագոյն զանձուց՝ նախ զատ ունելով ՚ի ձեռին. բանալ զայն զորմանագործ և զհրաշակերտ զդուռն՝ մտանել ՚ի նա քննութեամբ, և զանշատելի ընդ՝ անձառելի գործս արարչին, բարբառել բատ յորայ, ո՛ արար զմեծամեծս և զանքննելիս և զհրաշակերտս՝ որոց ոչ գոյ թիւ։ Ահա հանդիպեցին մտանել յայս մեծագոյն և զեղեցկանոց գիտութիւն՝ Աստղագիտութեան. Ահա և սիրել զկարութիւն ազխատութե, որ ՚ի բնէ անձի են բարք՝ առաւելապէս ազգիս մերոյ. յորոց որոց և նախնեաց զանիմք մեծ տանջին յոլ ազգաց.

Ահա զի՝ փայլուցք են մարդոյ ուսմանց. քանզի նափառ ունիմք մեք գծանօթութեան զինծիմարտեն, և ՚ի ձեռն նոյ ասամանք զուսածութեան մտաց. որով կարգանից մտաւն մեր ամենաթեն մերձանայ առ արարչին լոյսն. և խրախոյս բարձել ապագային թէ՝ ո՛րչ զի մեծ են գործք քո Տէր. և թէ՝ լի են երկինք և երկիր փառօք քո։ Աստի սխօրժմամբ հաճեցայք տպագրութ ՚ի լոյս ընծայել զսա,

եւ նուիրել հայկազունեացդ, որդ զձեռամբքդ ձգմամբ՝ ուղղապէս առաջնորդող ճանաչման՝ ախրդեան իրաց, ըզ կարգի, շաղկապի, վերլուծութեց, եւ զխախնանի. Այդ օգտակար պտուղն՝ յորմէ քաղել ունիք, է մակացութն զսկզբանց եւ արմատոց ամ գրքոյս՝ թշնամիք անհաշտե֊ լիք եւ բարեկամք անբաժանելիք՝ կարգեցեալ եւ կազմեցել շարից աստեղաց, զշրջանածոյ աշխարհի, զընթացից լուսաւորաց երկնայնոց զերեւութից օդականաց, զգունա զան կենդանեաց, բուսոց եւ անասնոց նոցին մանաւան զայդէս զատարինութեան զանհասանելս զերեւելոյն, եւ զմիութեան ամենազօր զօրութեն որ է ծախնն ամ՝ ուսմանց. զի զփիլիսոփայութիւն խոկումն մահու՝ որ առայն, ամենեցուն. Քանզի՝ ընաւից իմաստից նորա֊ տակն է՝ զգանձոյի աստուածութե՛ն 'ի մարդն համբարել եւ զմիութեան արմատակցելյամբ մաւհացուցանել. Հա֊ նդեալ զպատուականն յանօրդէն՝ բառ մարդադէն եւ բնածից, եւ անարգեալ զշարն առաւթեն՝ ընտրեալ զբա֊ րին ճշմարտութեան՝ բառ եւայեալ.

Բայց մինչ այսպէս հանճար մարդկային հարստա֊ նայ զիտութե ճշմարտութե, յայնժամ ծնանի յայսմա֊ նէ ներբին բաւականութի. Ս՛ զի՝ ամ ճշմարտութի նորն բառ նորբսանէ գեղեցիկութի անպատմելի. եւ բառ ունից իմաստնոյն՝ է նշոյլ միանջինաւոր լուսոյն, եւ հայե լի անապատ՝ ոյ ազդեցուեն, եւ պատկեր աստուածն նե֊ Աերբեմ այսուհետեւ անխոնջ պարապմանբ յընթերցում տարա՝ եւ 'ի սորին սակի եղեւոյն, զծանրաբեռնութիւն Նարմնոյ՝ եւ զբազմահոգութի մտաց 'ի բաց լեցուք. զի յա իմաստիցն՝ առանձնայպէս փայլեցի 'ի միտս մեր, եւ զթե֊ թեացելոյքս մերձացուսէ առ անեղն քաղցրութին ող. զի նա է որ ձգէ 'ի ծագաց մինչեւ 'ի ծագս՝ օգտակար առող֊ ջութի եւ զարմանէ զամենայնին քաղցրութի.

Արդ 'ի հարցանելին մեր 'ի յօտար ազգաց՝ թէ զա֊ ինչ ծնեալ եղեալք որդիք յաշխարհիս, կարողանա֊ ցեմք բառ անարգամտեալ պատասխանել թէ՝ ծնեալ

եմք

ումք առ նկատել զարեգակն, զլուսին, զաստեղս և զեր-կինս. Իսկ յայնս եւս ոչ կալ և մնալ որպէս կապեալ և պարահանդեալ, այլ վերացուցանել զմիտս մեր անդր եւս, և մտանել ՚ի ներքին կողմն վարագուրին՝ ուր գլուխն մեր Քս եմուտ, և զհամարձակութիւն մեզ շնորհեաց ՚ի մուտս սրբութեանց արեամբն իւրով, նորոգեալ մեզ ճանապարհ նորոգ ՚ի ձեռն մարմնոյն իւրոյ՝ բառ ա-ռաքելոյ, պանծացեալ ընդ պատրաստեալ վայելչու-թիւնսն՝ զիմաստութիւնն ընդ առաքինութեանն՝ իբրև զոսկի ընդ սարդիոն՝ պանծալապէս հիւսողս, արժանա-նամք համարձակապէս բարբառել՝ ընդ ՚ի յերրորդ յեր-կինս յափշտակելոյն պօղոսի թէ՝ այսուհետև ոչ բարձ-րութիւն և ոչ խորութիւն և ոչ այլ ինչ արարած կարէ մեկնել զմեզ ՚ի սիրոյ անտի Այ, որ ՚ի Քս Յս ՚ի Տր մեր.

Այսմ որոյ՝ և մեր փոյթ յանձին կալեալ ջանամք ՚ի յօգուտ պատանեկի ազգիս մերոյ, և ցանկամք մեզ զայնպիսի գրեանս տալ ՚ի նորահաստատ տպարանի մե-րում. որք ՚ի Մեզ և յԱռաջնոցն Վարդապետացն մերոց իցեն շարադրեցեալք. որք խնկապէս լի են լուսով գի-տութեան, և պայծառ անարատ հանճարով և յագեցու-ցիչք անզղուճելապէս՝ քաղցելոց մտաց. Յորոց զամենս մինչև ցայժմ տպագրութիւն՝ յանկխանգոյն աշտանակ լու-սաւորութեան՝ Սրբոյ Էջմիածնի մերոյ՝ բարձրացուցաք, և զայս բազումս հանդերձեալ եմք տեղամք ՚ի լոյս ածել Օրս ՚ի յընթերցումն. և յօգտիլն ձեր ՚ի նոցունց՝ արասջիք յիշման արժանի.

Օրհնեալ ոգի՝ Յովսէփ Արղութեան Տէր Արքեպիսկոպոսի՝ հոգևորական Հովուապետու-նոյ՝ Ռուսաստանեայց աշխարհիս. որ էր ծնեալ Ամենայն Հայաստանեայց Սբ Պատրիարքին Ամե-նայնի, և ազգասիրացն՝ Հոգևորաց Հայրապետ-ութեան Սրբոյ Էջմի, մահուամբ ննջեցեալ ՚ի պայծառափայլ Սրբոյ Էջմի էր:

ՅՐ.

# ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀԵՂԻՆԱԿԻՆ

*Յորում երկնային շարժմանն նմանեալ Յօհաննէսի Եզնկայեցւ-
ոյ շարադրեալ [illegible] բանից. 'ի խնդրոյ [illegible] և էր
[illegible] պատանւոյն պարոն Աղեթանեկայ.*

Ամենայն ոք՝ որ զբան որ է ծնունդ սնոտիմն մտաց, զրոյց 'ի քարտիսի կամիցի դրոշմել. պարտի և զնորին պատճառն՝ յանդիման կացուցանել. Որպէս մեր ցին ժամանակին ծընընդոց մարդկան՝ յօժարուն և տէր խնդրողի բանին, և աշխատանք տաճողի խնդրոյն, մի ծած կեացի 'ի բանտաւորաց և յաշխատասէր անձանց. Զի կարօտքն բանի՝ իբրև գերկիր ծարաւուտ՝ զցօղ քաղցրութեանն երկնի խնդրեսցեն. և ապա աղաստաւորքն բանի՝ իբրև պանդ ընդունակ ցօղոյ՝ զառեալն յանտահման ծովէ իմաստից և 'ի գետոց հասմանէ, յաղագս ծուլութեան մի արգելցին.

Ըստ որում և ես նմանեալ Յօհաննէսի Եզնկայեցի աշակերտ Հոգելից Հօրն և Ոչ Արքեպիսկոպոսին Սարկանայ աղաստօր մը զրոյց բանի. 'Ի թվին ՌՄԶ. պատահեաց պալ 'ի կողմնս ամենայն Թագաւորութեանս աշխարհիս մեր, 'ի հաշտեցար և 'ի մեծ 'ի մայրաքաղաքն 'ի Տփխիս, փոյտակորան կոչեցեալ 'ի գիւղ պամողաց. Ուր հանդիպեցաւ խօսել մեզ բանս քարոզու 'ի զուան եկեղեցւոյն՝ Մեծապատիւ և խոհեմաբոտ և մեծ իշխան հայոց՝ պարոն Քարիմանինին. Զոր չինել էր ամենայն և բարի հոգի հայր նորա պարոն Ովէկն.

Ուր էր խօսեցեալ բանն՝ յաղագս երկնային շարժմանն. Վասն որոյ՝ ախորժելի եղև զուարթամիտ պատանւոյն Աղեթանեկայ. որ էր որդի կրտսեր՝ հաշտեածոր անուամն պարոն Ովէկայ. Ուր մայրենի ազգաւ թոռն

մեծի

Մեծի իշխանին Ջալալայ՝ տն Խաչենոյ. որդի մեծ բարե-
պաշտի, որ եւ ըստ օրինացն զարդարեալ հոգի, եւ ՚ի խըն-
դիր յորդորող զորդի

Սա խնդրեաց ՚ի մէնջ յաղագս երկնի եւ նորին շարժմանն Յար հարկեալ յորդորեաց զտկարութիւն մեր, եւ մեծապէս Նախագահողս Տէր Յոհան . յաղթանա-կան զործեց. եւ բարեպաշտական հայրց ծնունդ։ Որ եւ շար-ժեալ ՚ի սէրն եւ ՚ի յաւսոյ խնդրողաց , եւ այն առեալ ՚ի պատուէր յորդորանաց Տեառն՝ եւ ՚ի գերապատիւ եկե-ղեցւոյ գլխոյն, ՚ի նըրբաշխէից եւ ՚ի կարգաւորութեան բանից որ հայցն փորձառական մերոց . եւ յիմաստասիրաց արանց պարզեալ գրեցի համառօտ բանիւ եւ աշխարհական խօ-սիւք մի դիւրաւ հասկանալի լինելոց ընթերցողաց։

Արդ՝ որ գրեք յաղագս օգտի զօրական աշխատու-թեանս մեր. զբաւիցիք եւ զայս նախադրութիւնս , եւ ըզ-բանս յիշատակի անուանն խնդրողաց՝ եւ զգրողի սորին . գրեալ լիցիք եւ դուք ՚ի գիրն կենաց ։ Իսկ որ ծուլանայ եւ թողու զսա, ոչ լինի առանց պատժոց . եւր յոլով աշխատութեանց՝ զեւր տեսանել զկին տալ ոչ կամեցող լեալ ․



Է և քաղաք՝ ըստ սահմանի՝ պարագայս կեն-
յոց աշտարակք՝ կենդանակերպք՝ երկոտասան։
Որք են նոյներց՝ մարմնակերպացին կարգս բան.
Ի մասանցն՝ առ չեն կենաց ըղձակարող նոյն։

Յաղագս երկնից Եւ ասա՛ էն երկինս , Եւ ո՞րպէս իմաստութեամբ
յանգործից եղեն հրամանաւն աստուծոյ։ Ա.

# ԱՐԱՐԻՉՆ ԱՍՏՈՒԱԾ՝ ԻՄԱՍՏՈՒ-

թեամբ և զօրութեամբ արար զաշխարհս ամենայն զերևելի։ Եւ երևի զօրութիւն նորա՝ զի յոչընչէ ա-րար զամ արարածս. և տեսանի իմաստութիւնն՝ զի գեղեցիկ արուեստիւ յօրինեաց զերկինս և զերկիր։

Զորս նիւթ արար ած ՚ի պէտս շինութեան աշ-խարհի. Հուր՝ և հողմ. Ջուր՝ և հող։ Սոքա՝ սկզ-բունք և տարերք են ամ գոյից. և են հակառակ միմ-եանց։ Իսկ այլ արարածքս՝ ծառք և ծնունդք ՚ի սոցա նէ յառաջ եկեալ՝ և խառնեալ է միմեանս, յորմէ առեղ-ծան երևոյթքս, բոյսք և կենդանիք։ Եւ պիտոյ էր այս չորք տարերքս. զի առանց հողոյ ոչ լինէր թանձր մար-մին, և ոչ առանց ջրոյ՝ շաղղումն և միաւորութիւն , և առանց օդոյ՝ որ է հոգին , շարժումն ոչ լինէր , և ոչ առանց հրոյ՝ գոյն և երևումն։ Ասեն որոյ՝ առեղծ զամ գոյացեալ և նիւթական երևոյթքս ՚ի հողոյ , և զաղախսացեալ ջրովն. եւ շարժումն ՚ի յօդոյն. և երևումն և գոյն ՚ի հրոյն։ Եւ այս է զոր ասէ մեծ մարգարէն Մովսէս. ՚ի սկ-զբանէ արար ած զերկինս և զերկիր ։ Զի երկինքն՝ եր-կու բեբէ, հուր՝ և օդ։ Եւ երկիրս՝ երկու բեբէ. հող՝ և ջուր։

Եւ

Եւ յորժամ առեալ զայս չորս տարերս, արար եւս խնամատարութեանն իւր երեւեցոյց ի ստեղծուածն իւր. Զի հողն ծածկեալ էր՝ զներքի վայրն էառ. Եւ ջուրն ի մի հարցոյն զետեղեցոյց, եւ օդն որ թեթեւ էր քան զջուրն, ի վերոյ ջրոյն կայացոյց. Եւ հուրն որ առաւել թեթեւ էր քան զօդն, ի վերոյ քան զնա առհամանեցոյց. վասն զի՝ յօդն զիջութիւն ջրոյ կայ. Եւ քեղ օրինակ բանի թէ առնուս առաց եւ ջուր. եւ ձէթ, ի արկանես յամանն մի խառնեալ, սաստիկ յատակին նստի. Ջուրն ի վերոյ գայ. եւ ձէթն ի վերոյ քան զջուրն, եւ խառնեալն ամանն զամենայն ի ներքոյ իւր առնէ. Նոյն օրինակ նմանութեան եւ չորս տարերքս գտանին. Հուրն՝ զի թեթեւ է բնութ եւ շարժումն ի վեր առնէ, զհողանեւ շրջապատեալ զայլ երեք տարերքն. Եւ զի հողոյն ի ներքոյ մնացեալ՝ փչեաց փեռեկեալ ի մէջ հողոյն. ի վեր եւ ի վայր եւ ի չորս կողմն երկրի. զինչ հրեղէն երկինքն ձեւացաւ. եւ հողոյն կարգեցոյց ի ծոց նորա որպէս յամանն արկեալ. Եւ եր կեր՝ որ է հողն եւ ջուրն, ի միջոցի երկնից կառուցան.

Ահա այս է հրեղէն երկինքն՝ զոր արար ամ յառաջին աւուր արարչութեանն. որ բաժանեցաւ յերկրո կնացուցն. Զի որպէս ի վերոյ երկրի կամարաձեւ է եւ բոլոր, նոյնպէս է եւ ի ներքոյ երկրի. Վասնզի հաւասար է յերկրէս ի մէջ կողմանէ. Ի վերոյ երկրի՝ որպէս տեսանես զմիջոցս զայս, որ ի վերայ է երկնիցն յերկրէս. Նոյնպէս եւ այս չափաւ՝ ի ներքոյ երկրի, ներքին փորուածն եւ ծոյն. Որպէս ընդ արեւելս եւ ընդ արեւմուտս, եւ ի հիւսիս եւ ի հարաւ. հաւասար է երկինք յերկրէ.

## Յաղագս երեքեան երկնիցն, և շրջագայութեանն նոցին ըստ օրինակի. Բ

Արդ՝ առաջին երկին՝ հրեղէնն է, որ ասացաւ. զոր եթեր անուանեն։ Իսկ որ 'ի յետ նորա երկրորդ երկինք՝ հաստատութիւնն է, զոր արար Աստուած յերկրորդ աւուր արարչութեանն։ Զի ասաց Աստուած եղիցի հաստատութիւն 'ի մէջ ջրոց, և եղիցի մեկնել 'ի մէջ ջրոց և ջրոց. և եղև այնպէս։ Զի ջուրն՝ զերկոս երկիր ծածկեալ ունէր։ Հրամանաւն այս 'ի մէջ ջրոյն եմուտ օդն որէ հողմն. և վերացոյց զէս ջրոյն 'ի վեր՝ կամարաձև որպէս խորան, և այսպէս օդն և ջուրն որ 'ի վերայ օդոյն, կոչեցաւ հաստատութիւն։ Արդ է այս երկրորդ երկինք՝ 'ի յօդոյ և 'ի ջրոյ. 'ի ներքոյ առաջին և վերին երկնիցն. որ է հրեղէն։

Արդ է երրորդ երկին օդեղէն, յորում են արեգակն և լուսինն և աստեղքն, և երկինք կոչին զերբ։ Ըստ այնմ արար զլուսաւորս և եդ զնոսա 'ի հաստատութեանն։

Արդ այս երեք երկինքս՝ հեռի են 'ի միմեանց. զի որպէս օդն՝ յորում լուսաւորքն հեռի են յերկրէս, նոյնպէս ջրեղէն կամարն հեռի է յօդոյն։ Այսպէս և հրեղէն երկինն, հեռի է 'ի ջրոյն։

Արդ այս երեք երկինքս անդադար շուրջ գան՝ զերկրաւս։ Հրեղէն երկնից շուրջ գալն՝ անտեսանելի է աչաց. և անթուելի համարոց, և անչափելի։ Իսկ այս երկինս՝ որ աչաց երևի շուրջ գալն. և լուսաւորացդ տեսանի. առաւ իմացաք զվերինն։ Արդ թէ անհաւատալի թուի քեզ, թէ որպէս ջուրն զաղարի 'ի վերայ օդոյն և 'ի շուրջ գալն որպէս 'ի վայր ոչ հոսի. Քեզ օրինակ որ հաւատաս՝ զամպն տես. զի ամպն՝ 'ի ծովէ և 'ի գետոց առնու զջուրն, և վերանայ. և ածէ անձրև 'ի վերայ երկրի. և թէպէտ ջրովն ծանրացեալ է. այլ առնու և վերանայ զջուրն և հալէ 'ի ներքոյ անցեալ՝ առնել զնման բեղ.

ընդ երկինս. և ոչ թափի 'ի վայր ջուրն. այլ կայ ամե-
նայն հրամանաւն Այ ծրարեալ յօդս. Եւ ըստ ակնար-
կութեանն Այ, անձրևէ ուր և կամի. Այսպէս և ջրե-
ղէն երկինքն որ է 'ի ներքոյ հրեղինին, և վերայ նորա,
շուրջ գայ անդադար ընդ զնա.

Յաղագս երկրի, թէ որպէս շուրջ գոյն երկնի՝ երկիր հաստա-
տուն կայ, և երկնից մէջ շուրջ. Գ

Ասեն իմաստունքն վասն երկրի, թէ որպէս զակու-
տեղ է. և այլք՝ թէ բոլոր որպէս գնդաձև է. Եւ երկինքն պատեալ է զերկիրս, և երկիրս 'ի մէջ կայ. Եւ երկնից հողմն՝ որ 'ի ներքոյ երկրի կայ, 'ի վեր վզէ և ոչ թողու որ 'ի վայր գնայ երկիրս և իւր բնական ծանրութիւն՝ ոչ թողու որ 'ի վեր շարժի. և այսպէս՝ հաստատուն կայ 'ի միջոցին.

Եւ էն 'ի մէջ երկրի հրոյ երակք, և է ջրոյ երակք և կայ քամւոյ երակք. Եւ զի երկիրս ծանր է և 'ի վայր հակէ. և հողմն 'ի վեր մղէ, ջուրն որ 'ի միջոցին է, մղէ ընդ հողն և յերար կափչի. և լինի տալրայատակ, և խառնայ՝ և մնայ երկրային մարմնոյս. 'Ի տեղի ուր հրոյն երակքն կան. ջուրն տաք գայ 'ի վեր. և ուր քամւոյն երակն կայ՝ թէ հնչէ քամին 'ի ներքոյ երկրի, տեղեք որ նօսր լինի՝ յերերք ելանէ՝ և շարժ լինի հրամանաւն Այ, յորժամ կամենայ խրատել զմեզ.

Եւ այսպէս՝ երկինքն իւր արագ շրջագայութեամբն, ոչ թողու զերկիրս որ 'ի ներքին կիսագունդն իջանէ. Եւ զի երկիրս ծանր է, և ջուրք ծովուն 'ի վերայ երկրի է, նա հողոյն և ջրոյն ծանրութիւնն ոչ թողու որ 'ի վեր տանի. Եւ հողմն որ 'ի ներքոյ կայ՝ ոչ թողու 'ի վայր գնալ.

Եւ թէ օրինակ խնդրես, թէ որպէս կայ երկիրս 'ի մէջ երկնից. քեզ օրինակ ձու հաւուն, բոլոր դեղնուցն որ 'ի մէջն կայ՝ է նման երկրիս. և սպիտակուցն

օդոյն նման. և միջն բարակ որ յետ սպիտակուցին է այն ջրեղէն կամարն է, և խուձեալն՝ հրեղէն երկինն. Եւ այլ օրինակ. 'ի կրետէս կղզին անդամանդ քարեայ տաճար է շինած, և պղպատ երկաթէ պատկեր է արարած. և 'ի մէջն թողած. ծանրութիւն երկաթին 'ի վայր հակէ և զօրութիւն անդամանդ քարին 'ի վեր քարշէ. և կայ այսպէս հաստատեալ՝ 'ի միջոյին 'ի կախ. Նոյնպէս և երկիրս՝ 'ի մէջ երկու կիսագնդին երկնից կայ հաստատեալ բանիւ հրամանին Այ. որ ասէ ես հաստատեցի ըզ սիւնս նորա.

## Վասն ծովու և աղբերց. Դ.

Երկրորդ աւուր արարչութեանն հրամայեաց Ած ասելով. ժողովեսցին ջուրքդ որ 'ի ներքոյ երկնից 'ի ժողով մի. և երևեսցի ցամաքն. և եղև այնպէս և զժողով ջուրցն կոչեաց ծովս. Վասն որոյ՝ ասեն իմաստունքն թէ 'ի ներքոյ երկրի. և 'ի մէջն. և շուրջ զեզերօքն ջուրք են յամ կողմանց. Եւ զի 'ի ներքոյ երկրի ջուր է. վկայէ սաղմոսն. Նա ինքն 'ի վերայ ծովու հիմունըս արկ երկրի. Եւ 'ի վերայ երկրիս են ջուրք ծովուն. զոր անգնդական ծով ասէ. Եւ շուրջ երկրիս ջուր է, զոր ովկիանոս ծով անուանեն, և յայս ծովս՝ որ շուրջ զերկրաւն է, ոչ նաւ ելանէ 'ի վերայ, և ոչ կենդանի կարէ բնակել 'ի նմա. զի սաստիկ սուր է, և արագապէս խառնմամբ հողմոյն՝ շուրջ գայ զերկրաւն. Իսկ յայս ծովս որ 'ի վերայ երկրիս է, ելանեն նաւք, և բնակին կենդանիք. զի կան 'ի մէջն ձրինք և բլուրք.

Եւ

Այս է պատճառն՝ զի յամէն ինչ խառն է հուրն վասն պիտոյից ։ Զի տունկք և պտղաբերք՝ ջերմութեամբ հրոյն հասանին ։ Եւ այն հուրս զոր մարդիք ունին 'ի պէտս, յայտնի է ։ Նաև և 'ի հարուածոյ կայծ կուրի ջերմ է, և սաստիկ տաք. ոչ միայն վասն արեգականն սակայն այլ՝ բնական հուր խառնեալ է ընդ օդոյն, և երբեմն զջուր թանձրացեալ է օդն, զոր հրեղէն ծով անուանեն ։ Այն որոյ՝ արարիչն՝ իմաստութեամբ մեծաւ, նոյն չափով և կշռով արար զջուրն, զի կայցէ ընդդէմ հրոյն ։ Եւ մն այսորիկ՝ պիտոյ էր վերին ջրեղէն կամարն, զի մի հող-մոյն բնութիւնն՝ որ 'ի ներքոյ նորա կան որպէս ըղ-ձեռնակք, 'ի վեր փչեսցէ՝ և պատառեսցէ զերկնային կամարն ; և կամ յեռ սահմանեալ տեղւոյն 'ի վեր մղեսցէ ։

Որպէս և յայտնի է տեսանել՝ զոր պատառէ հող-մըն. որ և զհերձուածն՝ որոտ անուանեմք ։ Եւ զի ջրեղէն կամարն՝ 'ի միջոցի հողմոյն և հրեղէն երկնիցն, արգել լինի հողմոյն ։ Եւ որպէս զհողմն 'ի վայր արգելէ թանձ-րութիւն ջրոյն, նոյնպէս և կայ ընդդէմ հրեղէն երկ-նից, և չինի նմա կերակուր, զի մի կիզեսցի աշխարհ 'ի սաստիկ հրոյն ։ Զի 'ի ջերմութենէ արեգականն՝ և 'ի հրեղէն երկնիցն, կիզեալ այրիւր աշխարհ ։ Վասն այնո-րիկ ջուր ծովու՝ արեգականն կերակուր լինի, և այլ լու-սաւորացն ։ Նոյնպէս և ջրեղէն երկինն՝ հրեղէն երկ-նից զինակ լինի ։ Եւ զի որպէս լոյս ճրագին, պատրու-կաւն զձէթն ծծէ ; և պակասեցուցանէ ։ և բժիշկն՝ սրուակովն զարիւնն ծծէ և քարշէ. այնպէս լուսաւորքդ և հրեղէն երկինն զջուրսն ։ Եւ թէ հասանէր ջուր՝ ան-ցանէր ն, որպ 'ի հասանել ձիթին, անցանէ ճրագն ։

Իսկ այն ջուրն՝ որ շուրջ զեզերօք երկրիս կայ. որ տաքոյ քան զինքն՝ ոչ լերինք և ոչ այլ դաշտաք կան, որ արգել լինի ջրոյն ։ Նաև սաստիկ հողմն խառնեալ



ընդ

ընդ ջրոյն, և արտաքսեալ ՚ի շուրջ գոլով՝ մինչ է գեղե-
ըլս եկեղի. որ կայ՝ ՚ի վերայ ուղխի Հրամանաւն նոյ.

Հ. Ջուր ծովուն քաղցր է՞ թէ աղի է. խմել լինի՞ թէ ոչ. և վասն է՞ր որ այ-
մ՞ գետերս ՚ի ծովն գնան և ծովն ոչ լինի լցեալ, և վասն չ...
ոչ եղանի. Պ.

Աստ այն աղի են ջուրք ծովու՝ զի ջերմութիւն արեգականն՝ ծծէ և քաղէ զքաղցրն՝ և զյստակն և զանուշ ջուրսն, և թողու հանէ. Եւ որ մնայ ՚ի նոցին թանձր է և աղի և լեղի և պղտոր. Եւ վասն այն միակերպ-ման ջուրք ծովու. զի զոր մտանելով գետոցն յաւելու-ցուն ծծէ արեգակն և պակասեցուցանէ. Զոր օրինակ թէ լնուս ջուր ՚ի պղինձս, և եփես հրով. շոգին որ ելանէ պակասեցուցանէ զջուրն. Եւ թէ ոչ լնուս ջուր ամենևին պակասի և ցամաքի. Նոյնպէս իմացիր զա-գաւս, որ թէ ոչ մտանէին գետք ՚ի ծով, արեգական ջերմութիւնն սպառէր և ցամաքեցուցանէր զջուր ծովուն.

Եւ այլ օրինակ բեր՝ որ զկտանիս թէ զյստակ և զանուշ ջուրն ծծէ ջերմութիւն արեգականն. վասն այն ջուր ծովուն աղի և դառն է. Բայց թէ՝ յորժամ պակասի ջուր նաւորդացն, և ոչ գտանեն ջուր ըմպելոյ, վասն զի զտանէ ջուր ծովուն, առնուն զաղի և զդառն ջուր ծովուն, և լնուն ՚ի կաթսայս և եռացուցանեն, և դնեն սպունգս մեծամեծս՝ (այն զոր ասեն ամեն) խփուն կաթսայիցն՝ և զշոգին որ ելանէ. Ժողովեն սպունգն զշիթն, և քամելով զայն՝ ժողովեն ջուրս քաղցր և ըմպեն. Եւ և այլ պատճառ, որ ոչ յաւելուն, և ոչ պակասեն ջուրք ծովուն. Զի որ ՚ի վերայ երեսաց երկրի մտանեն գետք ՚ի ծովն և յաւելուն, այն ՚ի ներքոյ երկրի երակօք քամին և ելանեն ՚ի յերկրին՝ և ՚ի զուշտս աղբերացն. և այս որ մտանելով գետոցն յաւելու, երանելովն աղբերացն պակասի.

## Վասն շրջանին երկնից յորում կան լուսաւորքն։ Է.

Արդ նոյն գիրն ասէ, թէ արար Աստուած զլուսաւորսդ՝ և եդ զնոսա ՚ի հաստատութեան երկնից լուսատու լինել։ Նոյն երկինս որ ՚ի յողոյս է բաժանի ՚ի յութ, եօթն՝ մոլորակացն կոչի, և ութ՝ մոլորագունդ անուանի, զայն որ մոլորակունք են, և թն ապրունակ, և եօթն գօտի և եօթն երկինք անուանին, և յամէն երկինք է մոլորակն մի։ Եւ այսոն մոլորակունքն ՚ի վերուստ ՚ի վայր սկսեալ։ Զօհալ։ Մուշթարի։ Մառեխ։ Շէմս։ Զօհրէ։ Օտարիտ։ Կամէր։ Նոյն տաճկիկ լեզուաւ անուանքն են։ Իսկ ՚ի հայ լեզու, Երևակ։ Լուսնթագ։ Հրատ։ Արեգակն։ Արուսեակ։ Փայլածու։ Լուսին։ ՚Ի վերոյ քան զամէն Զօհալն, և ՚ի ներքոյ ամէնէ Լուսինն։

♄ ♃ ♂ ☉ ♀ ☿ ☾

Եւ այն որ ամենայն զունդն է՝ են երկոտասան Կենդանակերպքն. և բոլոր երկինքն՝ է երկոտասան բաժին. և ամէն կենդանակերպ՝ յերկինս իւր տեղի ունի. վասն որոյ՝ և իմաստունք զերկինս երկոտասան բաժին են արարեալ, և ՚ի վերայ կենդանակերպացն և իւրեանց ըստ անուն բաժանեալ են։ Եւ է աշխարհս՝ մարդակերպ.

♈ Խոյն՝ ունի զգլուխ մարդոյն. և զգլխոյ աշխարհին։
♉ Ցուլն՝ զպարանոցն, և աշխարհս զարևելեայս։
♊ Երկուորեակն՝ զձեռսն և զուսսն, և ունի զաշխարհն զամէնն։
♋ Խեցգետինն՝ զլանջսն և աշխարհս զՀայաստան։
♌ Առիւծն՝ սիրտն և կողքն, և աշխարհս զասիայ։
♍ Կոյսն՝ զներքին որովայնն, և զաշխարհս զելամացիս։
♎ Կշիռն՝ երկու կուշտն, և աշխարհս զՀինդս։
♏ Կարիճն՝ անդամքն, և աշխարհս զկրետացիս։
♐ Աղեղնաւորն, բարձքն և երանքն, և աշխարհս զթաւալիս։
♑ Այծեղջերն՝ զերկու ծունկն, և զաշխարհս զասորեստան։
♒ Ջրհոսն՝ սրունքն. և զաշխարհս զեգիպտոս և զհաբաշ։
♓ Ձուկն՝ զերկու թաթ ոտիցն, և աշխարհս զՀնդուստան

Ասէ, երկոտասան կենդանակերպքն յերկինս՝ երկոտասան ամիս տարւոյն, և ամէն կենդանակերպ է երեսուն աստիճան, որ է երեսուն օր ամսոյ. Ասէ, բոլորական երկինքն՝ երեք հարիւր վաթսուն աստիճան, որ է երեք հարիւր վաթսուն օր տարւոյն. Իսկ՝ ամէնի ամսուքն որ հինգ օր՝ այլ մնացածաց հաշիւ կոյ՝ այն անուն լինի.

Ասէ գիտասցես զի երկնից 'ի շուրջ գալոյն լինին ժամքն՝ որք քսան և չորս պահ աւուրն. և 'ի ժամուցն լինին աւուրքն, և յօրերոյն՝ շաբաթքն, և 'ի շաբաթնոյն՝ ամիսք, և յամսոյն՝ տարիքն, և 'ի տարեացն լինի ժամանակն. Ասէ է ժամանակն ծնունդ շարժման շրջագայութեան երկնից.

### Թէ որպէս շրջի և շուրջ գայ գնացքն երկնից. և որպէս գնայ արեգակն և լուսին և աստեղքն. Ա.

Ասէ թէ կամիս գիտել թէ որպէս 'ի շուրջ գայ երկինքն և յայն շուրջ գալն թուեալ համարին ժամքն և աւուրքն, է այսպէս շրջել երկնից. յորժամ՝ վեց կենդանակերպ 'ի վեր գայ 'ի վերայ երկրիս, որ է վեց կենդանակերպացն տասն և հինգ աստիճան. և տասն և հինգ աստիճանն պահ մի, որ է ժամ մի. և երբ լինի կենդանակերպ մի գայ 'ի վերայ, ելանէ յարէն երկու պահ.

Ասէ հաստատեա՛ այս օրինակաւ. համարեաց թէ գարունն է՝ և արեգակն 'ի Խոյն. Երկու ժամ պահն Խոյն գայ 'ի վեր, երկու ժամ պահ այլ Ցուլն, երկու ♈ ♉
ժամ Երկաւորքն. երկու Խեցգետինն. երկու Առիւծն. ♊ ♋ ♌
երկու պահ այլ Կոյսն. Այս վեց կենդանակերպս՝ 'ի ♍
երկոտասան պահ աւուրն գայ 'ի վեր 'ի տիւն, և այս երեկոյն լինի, և Խոյն՝ մտանէ ընդ արևմուտս 'ի ներքև կլորութեանն, և Կշիռն ելանէ յարևելս, և այսպէս ♎
հետ Կշռին՝ վեց կենդանակերպքն այլ 'ի վեր գայ, մինչև 'ի լոյսն 'ի երկոտասան պահ գիշերոյն, և լինի ընդ օրն և

ընդ

ընդ գիշերն քսան և չորս ժամ։ Արդ դարձեալ՝ Խոյն երանեալ. որ արեգակն ՚ի նմա ՚ի յինքն կայ. այս մին կենդանակերպական խոնչեր գիրկատասնան.

Արդ զի՝ հաւասար մէջ կենդանակերպ ՚ի մերց երկիրս լինի, և մէջ ՚ի նմայ. Արդ ընդ օրն, և ընդ գիշերն մին շուրջ գայ երկիրն. Ա՛ գործ զարեգակն և զլուսինն և զաստեղսն զինի իւր ՚ի շուրջ ածէ.

Որպէս օրինակաւ փիլիսոփայից, թէ արեգակն և այլ լուսաւորք ընդ արևելս ելանեն ։ Թ.

Բայց գիտասցէք և զայս, զի երկիրն՝ յարևելից յարևմուտս շրջի. Արդ արեգակն՝ և լուսին և աստեղք յարևմտից յարևելս գնան, առ ՚ի չէք ընդ հիւսիսոյ՝ ընդ հարաւ լինանեն. և դարձեալ ՚ի հիւսիս՝ բարձրանայ երանեն և լուսաւորքդ հակառակ երկնայինն շարժմանն. Զոր օրինակ մարդ նաւէ ՚ի գետ, և ՚ի ջուրն ՚ի մէջ գնայ. գետն յառաջ է՝ փութով անցանէ և գնայ. և մարդն՝ ՚ի ջուրն ՚ի մէջ փոքր փոքր կարէ գնալ. Կամ զոր օրինակ՝ թէ մրջիւն գնա ՚ի վերայ ջաղացին քարին, յոր կոչմանէ քարն ՚ի շուրջ գայ, մրջիւնն ընդդէմ հակառակ նմա ՚ի մին այլ կողմն շարժի և գնայ։ Զի առաջ շրջագայութիւնն երկանին յետս դէ գնա, և նա ՚ի հարկէ ՚ի մին այլ կողմն ընթանայ. և երկանն իւր արագութեան տանի զնա ընդ իւր շրջելով.

Առաջին և զայս ՚ի լուսնեաց յորժամ նոր ծնանի, տանու մնայ արեգակն, յարևմտից կողմն երևի և որ քան զոր դէպ յարևելս անէ զգնայսն. Արդ երբ հնգետասան օր լինի՝ որ լուսին առնու, յարևելս երևի.

Եւ այն ասեն թէ այն՝ որ յամէն օր կու երանէ յարևելից, և մտանէ յարևմուտս. այն՝ երկիրն է, որ զնա ընդ իւր տանի և դառնէ զաշխարհ. Նոյն իսկն՝ իւր գնացիւքն ընդ արևելս ընթանայ. Արդ այլ մեկ քեզ՝

զա

զարեգականն զնոսաքն· զի կենդանակերպքն 'ի կարգի և 'ի կէս են ընդ միմեանս· Խոյն՝ և ցուլն՝ երկուորքն և այն Եւ արեգակն կատարէ զխոյն՝ և 'ի ցուլն մտանէ · և ըզ ցուլն վճարէ՝ և յերկուորսն մտանէ · և այսպէս 'ի տարին վճարէ զերեքեանսն , և զերեքտասան կենդանակերպսն Եւ այն զոր ասացաք, ․ յամսն որ կոչէ երևէ, յարևե լէց , և մտանէ յարևմուտս · այն երկինքն է որ զնա կու բերէ·

♈ ♉ Ⅱ

## Յաղագս Չորս Եղանակաց Տարւոյն : Ժ·

Եւ այլազգ շարժումն և ընթացք լուսաւորացն· որ 'ի հիւսիսոյ 'ի հարաւ իջանեն և 'ի հարաւոյ 'ի հիւսիս ելանեն · և առնել լինի չորս եղանակ տարւոյն. գարունն՝ և ամառն, աշունն՝ և ձմեռն · Զի չորս կողմ է աշխարհի, արևելք և արևմուտ, հիւսիս և հարաւ ·

Եւ որպէս են խառնուածքն զաշխարհս՝ երկոտասան բաժնեն· և մէջ աշխարհի՝ զիւրքն հնգիւս ասեն · Եւ 'ի հնդուստան, դէպ 'ի կողմն հարաւոյ՝ չորս բաժին աշխարհիս այն է՝ որ աստղագիտութեանէ և անշէն, զի առաւել ջերմ է և հրախառն օդ · վասն որոյ՝ այրեցեալ գօտի ասեն· Եւ 'ի հնդուստանայ դէպ 'ի հիւսիս՝ հօթն բաժինէ այս միջոցս և է բարեխառն, և առողջ հաւուց և մարդկանց և շէն աշխարհ · Եւ որ յայս եօթնեսին յաւելեալ է 'ի կողմանս հիւսիսոյ, 'ի առաւել ցրտոյն և 'ի սառնամանեացն՝ անբնակ է 'ի մարդկանէ և բուսեմաբան և անշէն է ցրտոյ, և սառն օդոյ և հողմոց·

Եւ զի կողմն հարաւոյ՝ հուր և ջերմ, տօթ և տապ է· վասն որոյ՝ այն աշխարհի մարդիկքն յաճելի ջերմութենէն՝ սեւ արջասպոյ նկարեալ են թխացեալ·

Եւ այժմ զի գիտասցես զչորս կողմն աշխարհիս· և այլ խնդրես· զի այն երկոտասան կենդանակերպքն որ յերկնին են 'ի վերայ աշխարհիս բաժանեալ են. Զի յոր ժամ 'ի Խոյն մտանէ արեգակն՝ ուստերաց պահանջ

յի

լինի։ Խոյն ՚ի մէջ երկնից է. և իւր գլխոյն՝ կշիռն է յա-
րեւմուտս. վասն այն օրն և գիշերն հաւասար լինի ՚ի
գարնանամտութն. և յորժամ հեռանայ արեւն՝ յամէն օր մասն
մի առնէ. զի արեգակն՝ բարձրանայ դէպ ՚ի հիւսիս յա-
♈ ♉ մէն օր մասն մի, երեք կենդանակերպովն. Խոյ՝ Ցուլ՝
♊ Երկուոր, և գ. բանն եղանակ է. Սա ՚ի սկսանել գար-
նան եղանակի՝ արմատք և բոյսք ուրախին, մարդք
զուարթանան, ծաղիկք պայծառանան, և անասունք, և
թռչունք ՚ի ծնունդս գան. Իսկ այս երեք կենդանակեր-
պովս՝ գնալով ընդ հիւսիս՝ և ՚ի վճարել գարնան եղա-
նակին՝ մտանէ արեգակն ՚ի Խեցգետինն. ուր է սահ-
մանն. և սկիզբն լինի ամառան եղանակին և լինի յայնմ
օրն հնգետասան ժամ. և գիշերն ինն. և յամենայն ՚ի
հիւսիսակողմն երեք այս՝ կենդանակերպովն՝ որ է
♋ ♌ ♍ Խեցգետին՝ Առիւծն՝ և Կոյսն, առնէ զեղանակ ամա-
ռան, յամենայն օր մասն մի ցածնալով. Իսկ զի ՚ի հիւ-
սիսոյ կարճէ յայնժամ արեգակն, պղտորն հալածէ ՚ի
ներքոյ երկրի. և ցօղն՝ որ ՚ի վերոյ երկրի նուազանէ.
և զխոնաւ զիջութիւնն՝ որ ՚ի ներքոյ երկրի է ծծէ. և
զսերմանիս և զպտուղս արմատեալ աճէ և հասուցանէ.
Իսկ ՚ի վճարել ամառան կենդանակերպացն՝ մտանէ ՚ի
♎ Կշիռն. և սկսանի այնուհետև աշունն. և լինի քաղցրա-
խառն և մեղմ օդն. և դարձեալ հաւասարին տիւն և
գիշերն. և սակս փոքր փոքր ամենայն աճումն մասն մի
խոնարհի, և իջանէ ընդ հարաւ. և փոքրանայ օրն, և
ցրտանայ օդն, և ջրդ մտանէ ՚ի յեղանակս ձմերան. Իսկ
՚ի հեռանալ արեգականն ընդ հարաւ, և ՚ի ցածանալն՝
գիշերքն մեծանան, և հիւսիսայնն հողմն զօդն սառուցա-
նէ. և հնչեն հիւսիսայնն սառնամանիքն, և լինի ձիւնա-
բեր բերմունք. Իսկ այս՝ վասն այնորիկ լինի, զի արեգա-
կանն ջերմութիւն ՚ի հարաւ է ՚ի ցած դիրն, և հիւսի-
սայնն հողմն զօրացեալ հալածէ, զհարաւայնն ջերմ օդն
՚ի ներքոյ երկրի արգելեալ փակէ. և սառուցեալ անդէ
զերեսս երկրի. Իսկ վասն այնորիկ աղբերականքն՝ ձմե-

րան

արն ջերմ և տաք բղխեն. զի արեգականն ջերմութիւն և հարաւոյին հողմն զօրութիւն՝ ՚ի ներքոյ երկրի մինչ ջեռուցանեն զխոնաւութիւն ջրոյ. Այլ և յամառնային եղանակին՝ որ արեգակն ՚ի հիւսիս բարձրանայ՝ զցուրտն հալածէ, և ՚ի ներքոյ երկրի փակէ. և վասն այսորիկ աղբերք սառն և ցուրտ բղխեն.

Յորժամ այս երեք կենդանակերպսն կատարէ զձմեռն, որ է Այծեղջիւրն՝ Ջրհոսն՝ և Ձկունքն, մնան մահէ, և բարձրանայ և հասանէ ՚ի մէջ երկնից, և ՚ի խոյն. որ է գարուն գլուխ. ♑ ♒ ♓

Եւ այսպէս ծանիր զշրջանն երկնից, և զկնոյս լուսաւորացդ, և զփոփոխումն եղանակացդ.

## Վասն եօթն գօտեացն՝ որս ասեն եօթն պարունակս. և կոչէ եօթն երկինս. ԺԷ.

Այս եօթն երկինքս՝ եօթն Մոլորակացն տեղի են և մոլորականքն պտտելիք են. Զօհալ, Մուշթարի, Մառեխ, Շամս, Զօհրայ, Օտարիտ, Ղամար. ♄ ♃ ♂ ☉ ♀ ☿ ☾

Եւ յետ Գ յերկնէս ՚ի վեր խնամս. Լուսնին գօտին Լուսնային է. որ կոչի հոռոմերէն սելինա. փռանկերէն լունայ. տաճկերէն ղամար. և հայերէն լուսին. և է մօտ երկրիս քան զամ՚ աստեղս և իւր զնացից ատտ-ձանքն՝ նուրբ է և կարճ. Զի իւր կամարն փոքր է քան զամ՚ զո յածութիւն. կենդ յամէն սասքենեմ՝ երկու ժամ, պակաս չորս մասն. և ՚ի կենդանակերպն՝ երկու օր և կէս. Վասն և յետ որ և կէսն վճարէ զամ՚ երկինքն և նոր ծնունդ առնու. և լինի լնորէ ՚ի նոր քսան և ինն օր և կէս. ☾

Երկրորդ գօտին՝ որ ՚ի վերոյ լուսնին, Փայլածուն է. հոռոմերէն հերմէս ասի. փռանկերէն մերքուրիուս. տաճկերէն օտարիտ՝ և վճարէ զիւր երկինքն ՚ի տասն ամիսն. ☿

Երրորդ գօտին՝ Լուսաբերն է հոռոմերէն ափրոդի- ♀

տէս

րէս աստղ. փռանգն վէնուս վէներուս. տաճիկն զօհրայ. 'ի տասն ամսոյն վճարէ և ամ։

☉ Չորրորդն՝ Արեգակն է. հռոմն Հելիոս աստ. փռանգն սոլ. տաճիկն շամս. և երեսուն օր կենայ 'ի կենդանակերպն։

♂ Հինգերորդն՝ Հրատն է. հռոմն արէս աստ. փռանգն մօր. տաճիկն մառեխ. քառասուն օր կենայ 'ի կենդանակերպն։

♃ Վեցերորդ՝ վերև Հրատին Լուսնթագն է. հռոմն ջէւս աստ. փռանգն եուպիթէր. տաճիկն մուշթարի. 'ի մի աստիճանս երկոտասան օր կենայ։

♄ Եօթներորդ՝ վերև Լուսնթագին Երևակն է. հռոմն կռոնոս աստ. փռանգն սաթուռնուս. տաճիկն զօհալ. սա 'ի մի աստիճանն կենայ երեսուն օր, և 'ի երեսուն տարին պատէ զերկոտասան կենդանակերպսն։

### Յաղագս օդոյն որ է հողմն, որ ասի ջաւդ. ԺԱ

Այս սքանչելի արարածս՝ զմին բնութիւն երացն 'ի բազումս բաժանէ. և բազում անուանմբք կոչին. Օդ 'ի չորս տարերացն միոյն քամին է. որ օդ ասեմք. և այս միոյս՝ ցեղացեղ անուանս ունին. Օդ ասի հողմն՝ քամի և օդ. Այս ասել լինի ամպն՝ ձիւնն, եղեամն. աղեղն՝ որ իջանէ, որոտմն, շանթերն, կարկուտք, և փայլակն, և այլ բազում իրք։

## Թէ ուստի՞ լինին այտուցք ՚ի յօդս և ՚ի մարմինս։ ՃԿԴ

Երկու գոլորշիք որ ելանեն յերկրէս ՚ի վեր՝ որ ասեն բուխար. և ՚ի վեր բարձրանան՝ նոքա և անտեսս առնուն. մինն գէճ է, և միւսն չոր։ Այն որ գէճն է յաղբերաց՝ ՚ի գետոց և ՚ի ջրոց ելանէ. և այն որ ցամաքըն է ՚ի չոր և ՚ի ցամաք գոլորշեացն լինի, և ՚ի հողմոցն որ փչուի ՚ի վերանոյ. Այն որ գէճն է՝ նովաւ լինի բոլոր՝ սառնամանիքն՝ ամպք՝ անձրեւք ձիւնք կարկուտք. և այն որ չոր գոլորշին է՝ որ է բուխարն յաշխարհէս, նովաւ լինի ազգի ազգի հողմք՝ որոտմունք՝ փայլատակմունք՝ կայծակն՝ հրձգութիւն, և այլ որ ինչ սոյին նման է։

## Զի՞նչ է Մէգն։ ՃԿԵ

Մէգն ՚ի զօրութէ ամպոյն է. զի յորժամ օդն թանձրանայ, բայց դառնայ. և է բայն քան զօդն թանձր և քան զամպն նօսր. և ունի սակաւ մի գիջութիւն, որ խոնաւացուցանէ զերեսս երկրի. զոր կոչեմք և մառախուղ։

## Զի՞նչ է Որոտն և Կայծակն։ ՃԿԶ

Յորժամ հողմն որ է քամին՝ բռնութիւ հնչէ՝ և ՚ի մէջ ամպոցն մտանէ, յայնժամ զթանձր ամպն պատառէ, և լինի ձայթմունք ՚ի պատառմանէս. զոր և որոտ անուանեմք. և ՚ի հողմոց յերար շփելոյն և ՚ի ճնշելոյն հուր փայլէ. զայն փայլատակունք ասեն և կայծակաւ։ Զի հուրն յոյժ արագածս խառնէ, և անցեալ յօդդ. և երբ հատանի հուրն յամպոյն, թէ թանձր ելանէ, յերկիր անկանի և վնաս առնէ. և թէ նօսր ելանէ՝ ոչ թողուն օդքն յերկիր, այլ ընդ օդն ցնդի անվնաս։

## Ձմեռն՝ որով էր ի՞ւ նուաղէ բնաւ. ԺԶ.

Քանզի ձմեռն ամենայն նուաղեալ է. զի ձմեռն հիւսիսային հողմն հնչէ, այն նուաղեցուցանէ զամենայն, և առաւել զդառնից ամենայն. զի հարաւային օդն է որ թանձրացուցանէ զամենայն.

## Ընդէր ի՞նչ պէտս է որոտումն. ԺԷ.

Քանզի ՚ի թանձրութեն ամպոյն՝ և ՚ի բռնութէ հողմոյն՝ չկարէ անձրևն ՚ի վայր հոսել. իսկ ՚ի գոլոյն՝ և ՚ի պատառելոյն թուլանայ հանապազ, և արկանէ զանձրևն. Եւ զոր օրինակ մարդ՝ զմանուկն յորժամ ծնանի, մեծանայն զօրանայ, և մինչ այն զօրանայ, զի զծնողն յիւրեն քարշէ. որ զծնչակսն երակսն նեղէ, և զմանուկն ՚ի վայր բերէ և ծնանի. Նոյնպէս և երկիր սառուցեալ և պատեալ է ՚ի ձմեռնային ժամանակս, և նմանեալ բղբնութիւն հողոյն. մի այնորիկ՝ պէտս է ձայն որոտայյն, զի թուլացուցանէ բնութիւն հողոյն. և բայց և սերմանք յերկրէ ՚ի վեր ծնանիցին, և ծառքն ծաղիկս փթթիցեն. և այս՝ ՚ի ձմեռնային կայանացն ՚ի բաց արձակին.

## Յաղագս Ձեան և Անձրևոյ. ԺԸ.

Յորժամ արեգակն ՚ի հարաւային կողմն դառնայ ՚ի խոնարհ, յայնժամ հիւսիսային կողմն զօրանայ և զօդն յիւրեար խառնէ՝ և թանձրացուցանէ, որ ամպ լինի և կտրատի, և ՚ի վայր հոսի սպիտակ և փափկատեսակ. զի ցուրտ քամին՝ փափկութիւն ջրոյն պատէ առնէ.

Եւ թե թանձր և մեծ թափի ՚ի վայր, այն սառնաբուխ ասի. և որ սակաւ և մանր՝ այն ձիւն կոչի. Իսկ ՚ի գարնանային ժամանակին՝ և յամառնային և յաշնան ՚ի ձեռն՝ օդն ժողովէ զջուրն ՚ի ծովէ և ՚ի գետոց, և առեալ յերկրէ ՚ի վեր բարձրանայ, և ՚ի քաջ ամպոց թօթափմանէ լինի անձրև. զի ՚ի գարնան ժամանակին օդն սպառաբա-

նայ

նայ 'ի գիջութէ ջրոյն. և յարեգականն ջերմութեն թանձ-
րանայ և խառնարհի 'ի միմեանս, և առնու բարձրանայ. զի
հոգին 'ի ներքոյ անցեալ՝ առնու ամպն. և հողմոյն զօ-
րացեալ և պատառեալ՝ ոչ՝ պատառի և թնդանայ և անձ-
րեւ 'ի վայր հոսի.

## Յաղագս Կայծակի. ԺԹ.

Կայծակունս լինի 'ի սաստիկ և 'ի զօրաւոր ցամաքէն, որ
չոգի 'ի հիւսիսոյ կողմանէ. և 'ի սաստիկ փչմանէ
հողմոյն՝ ուղղեալ բարբէ և ունի զհասարակութիւն ջրոյն, և
շողացեալ յերկիր թուաւ. և որ ուժով է խիստ. և է որ
նուազ. և այսպէս 'ի լեռնս և 'ի դաշտս միաբանեալ

## Թէ ուստի՞ լինի Ցօղն եւ Եղեամն. Ի.

Ցուսանօրէք՝ օդով պծուրն ծրծեն և 'ի վեր բարձեն.
Եւ երբ արեգակն ծագէ, թուլացուցանէ զօդն. և այն
որ ժողովեալ է 'ի յօդն՝ 'ի գետնին իջանէ և ցօղ կոչի այն
իսկ 'ի ցուրտ ժամն՝ թերասառույց լինի և կոչի եղեամն

## Զի՞նչ է Ծիածանն՝ որ երեւի, որ ասեն աղեղն ամպոյ. ԻԱ.

Պատճառ այսպէս իմանալոյն՝ գիջութ օդոյն է և ջեր-
մութեն արեգականն. Զի 'ի փոքրագոյն անձրեւէն՝
գիջութիւն՝ որ յօդն է ժողովեալ, և արեգականն ջեր-
մութեն յերեսաց խառնելն. օդոյն գիջութիւնն 'ի ներքուստ,
և արեգականն նշոյլքն 'ի վերուստ միաբանեալ, և 'ի նոս-
րութեն օդոյն՝ գունագոյն և երփներանգ երեւի կամարաձեւ
որպէս զերկնային գունովքն. Զի գոյն երկրին՝ և կանա-
չութեան բուսոյն՝ և ջրոյ և հրոյ՝ յերեսաց խառնելն, և
այնպէս երեւի. Թէ մէկ մէջ կամին որ երեւի, նշան գա-
լստեան անձրեւին է և առատութեան. և թէ երկու երեւի յայտ
և այլ գիծ. գարուն և սաստիկ անձրեւ նշանակէ. Եւ 'ի
սկզբանէ աշխարհի եր սա, զի հետեւանք է առաւելոյն. այլ
ծուփն

ԳՐԱԴԱՐԱՆ

Ծուխն հետեւանք է հրոյ. որ քամէ զէ՛ն խոնաւութիւն՝ ի հրոյին կրակոյն, եւ տապաւորութիւն բաց հրոյն. Այս ազատիկ եւ առ ՚ի նշանս՝ ՚ի յորդութեն անձրեւային զաղաղման.

### Թէ՛ զի՞նչ է կայծակն որ շանթելիք անուանի եւ քանի՞ ազգ են ասա. ԺԲ.

Է ազգ մի՝ որ շանթելիք ասեն, որ ՚ի հրեղէն երկնից կատարածի՝ եւ ՚ի վերայ հողի եւ ջրաւորի ուրեք. այլ յորժամ՝ յերկիր անկանի, ծածկէ զեթ անձրեւութեն երկիր, եւ զոր ինչ գտանէ այրէ, եւ ընդ ժամին ՚ի վերայ անցանէ ՚ի ներքոյ կիստացուցանե յիւր ազգակիցն ուստէ անկեալ է.

Եւ է ազգ մի՝ որ յորժամ ՚ի սառամնիկ ամպոյն՝ հողման ծածկ խառնեալ, որ յառաջ ծակէ եւ ... յերկին շրջի, եւ օդն ուսնու զուգաչափեալ ջուրն. եւ ՚ի վեր միացեալ ջրովն, եւ առնէ ՚ի բարձրն՝ ՚ի հրախառն եւ ՚ի սոյն օդն միջէ եւ շրջէ, եւ վառէ ուր գնայ. եւ ՚ի վերայ թողլէ. եւ յորժամ յերկիր հասանի՝ զոր ինչ գտանի այրէ եւ անցանէ, եւ մնայ ուր երկաթի քարշեալ.

Եւ է ազգ մի՝ որ ասեն թէ ասող թնդում. եւ սատիղ՝ ոչ թողու. այլ յորժամ ՚ի շրջակայ ... երկնից հնչէ, եւ սաստիկ որոտացելս անցանէ ՚ի որ գնայ զօրն որ առէ եւ հրախառն՝ ուր գնայ սպառէ, եւ եր կայնութիւն երեւի, եւ թուի թէ ասող թնդում.

Եւ է ազգ մի՝ որ ՚ի պատառել օդոյ ՚ի սաստիկ հողմոյն՝ միջին լոյսն հրակերպ երեւի եւ օդն որ պատառեցաւ՝ յերուր զայն եւ ՚ի կցելն ծածկի զարձեալ. եւ մեք կարծեմք ասեմք թէ ասող թնդում.

Նոյնպէս եւ այն՝ որ կայծակունս ասեն. զի յորժամ ամպն պատառի, ՚ի պատառմանէն որոտումն լինի. եւ յերուր շեղ լոյսն կայծակն լինի. Զի ով հրահոսն երեւելն՝ որ փայլ քարին բաղխէ, երանէ ձայն, եւ երանէ հուր. նոյնպէս յորժամ հողմն զամպն պատառէ, ՚ի պատառելն զորոտումն անէ, եւ հողմն ՚ի յամպոյն հուր հանէ, եւ ՚ի ներքս ուր անկանի մեռանէ.

Յա

Ճառայն որոտն է, ոտքս կայծակն · բայց մեք յառաջ զհրոյ լոյսն տեսանեմք, և ապա զորոտն լսեմք · զի աչքն այլ սուր է քան զականջն · և ակն զհեռուն տեսանէ, և ականջն զմօտն լսէ · զի արագ զլոյսն 'ի հեռուն տեսանեմք, և յորժամ ձայնն 'ի վայր հասանի և մօտի 'ի մեզ ապա ականջն լսէ ։ Եւ այս յորժամ 'ի ամպոց ժամն լինի թնդուցած ամպք առնեմք ։

Թէ զի՞նչ է այն որ Լուսինն բոլորակ ունենայ ։ ԻԳ

Թանձր օդն՝ որ ունի բոլոր զձառագայթ լուսնէն, և նշմարն 'ի դուրս երևայ յԷ թանձր օդն՝ բոլորակ լինի. և է նշան անձրևոյ ։

ՎԵՐՋ

Առաջնոյ մասին աւարտեալ ։

ԱՐԱՆ․

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ·

## Յաղագս որ 'ի սմա եղելոց էակացն՝ հանդիսաբանութիւն·

Զօրութիւն Աստուածային բանիւն՝ նախ՝ զտարերաց դրութիւն եւ զերկիր յօրինեաց · եւ ապա՝ զի 'ի շարժման, եւ 'ի շրջագայութենէ երկնից՝ ձմեռնային ժամանակք՝ եւ կենդանիք եւ բուսականք, որք 'ի ժամանակի· զոր խնամածուք սահմանեալ եղեն բնութիւն, այսէ նմայն պրուծոն եւ տասցէն զբնութիւն ձեռնէ յ շարժման եւ կայանի, այսէ շարժմանն երկնի, եւ կայականութեան երկրի·

Եւ ապա թէ՝ ոչ նմայն պրածառեն է զբութիւն տարերացս խառնութիւն, զոր սրբնականդ յօրինեաց· Եւ թէ՝ զերկիր կայ հաստատուն երկիր, եւ ոչ 'ի մէջն կայ երկնի· Աւասիկ եւ զհրեղէն երկնի՝ եւ զհաստատութեան զանազանութիւն թէ՝ ոչ զանազանեն բնութիւն· եւ զմերբախարդ՝ եւ զանմիջոց սահմանս զերկանն· Եւ թէ զաշխարհս 'ի վերայ երկրատարած կենդանականացն ոչ են բաժանեալ· Եւ թէ մարդ առանց զն 'ի կենդանակերպան՝ ոչ են զանազանեալ բնութիւն եւ զործով· եւ զինչ նշանակութիւն ունին Եւ ապա 'ինքրեան զտեղ սխալ՝ որէ յուսոյն, եւ զիօթն զօտիսն ասէ եւ զտասն սուն որ 'ի նմա, եւ զբնութիւն նորուն· եւ զինչ զործե ազդումն նշանացն՝ որ 'ի նորանէ լինի· եւ զինչ օգտի 'ի նշանացն՝ զոր յաղագս մերոյ օգտի եդ 'ի նմա· Իսկ յարեգակնէն՝ ուսցես զփոփոխումն եղանակացն, եւ զլութացս լուսաւորացդ· եւ թէ քանի բաժանի աշխարհս, որ

տեսէ

տիւն և գիշերն՝ անձանձրին և նուաղելովն փափաքելն.

Ո՞չ թէ չէ փայլապայծ գիտն և քննութիւն իմաստասիրացն. Ո՞չ թէ յոյժ եղեալ ՚ի բնութիւն աստեղացն՝ որ մի մեր տգետ՝ նշանք և գուշակմունք երևին ՚ի նոսա և զայդ օրինակաւ առաջնեալ են. որ չէ զործմունք՝ թէ յաստեղսն՝ ած գործութիւն եղեալ. Ո՞չ թէ փոխեր զուսումն ամենք նախատել որ, զոր չէ պարտ առնել. և թէ առնել զինչ է պատճառ. Ո՞չ պատճառ այնմ՝ լինէ՝ էր խոտելի աստեղացն բանն.

Ո՞չ ապա՝ ներքրադական գալեստ երկնի. թէ ծեքան լուսաւորքդ՝ յիմաստութիւն փոխէ զմեզ զոր ընական օրէնք առեմք. Ո՞չ ապա՝ այլայլմանութիւն և պարզաբանաբար՝ զլուսնին և զարեգականն զգործ և զինքն՝ ՚ի խրատ բնութիւն մարդկան. Ո՞չ թէ լուսինն օրինակ էր հնոյ օրինացն, և արեգակն՝ աւետարանին, և աստեղքն մեր զարէիցն. Ո՞չ ապա՝ զգալի արեգակն՝ յօրինակ աննեղի իմանալի արեգակնն արդարութեան. և զիջանելն ՚ի հայրական ծոցոյ. և զբանեին մարմնն լինելն. և ՚ի կուսական ծննդենէն զաներևութն ներգործութիւն մինչ ՚ի մեռ անդամ՝ զալուստն՝ համառօտեալ եւ ... ուղիղ զանունթիւն, և ոնց աւետարեալ.

Ո՛յս հարմնաստ գործութի որ ՚ի սմա. և որք այխաստաւորաբար մեր գնեն՝ յոլովս զանազան գործութի ՚ի սակաւ բանիցս՝ իբր պատմառս ասացի իմաստից. Ո՛յլ այս սակաւ ծանօթութի, և աղօթից ձերում յանդգնաց մեզ զթողութի.

Ո՛րքն



Նուէր՝ ՍԷ Նախնական Մատթէոսին Յօհաննու երե-
ցայեցւոյ Եան՝ յաղագս երկնային զարդուց՝ ըստ փոխաբերութեան 'ի
ինքնոյ Բնաբանութ Եղիային Խոսրովէ. ըստ Նախադէմ տառա-
տանց.

Յամենահրաշ՝ գործս արարչին՝ որ գտա ցան.
մեծ և ահեղ՝ պայծառայք՝ ի բարձունս ցան.
Սմանք 'ի սեռ զարմանալեաց՝ յոլովին ցան
և այլք 'ի պէտս՝ փոփոխութեան՝ մարդկան տա ճան.
Հանդարտականաց՝ արարածոց՝ մասունք լըր ման.
'ի յերկնային թռչնոց՝ տարրաբաշխեալ՝ բ 'անս ցան
Ո՛չ ընդհատ սկիզբըն և հիմունք՝ հաստատեա ցան.
'ի յերկրաս անկենդանաց բնութեան ցան,
Ոսկի երկնային՝ բոլորակին՝ բանք ձայն ցան.
Մեծ ա նորին՝ հաստատութեան՝ երկնի ե- ղան
'ի մայխևս՝ մարգարէութ նախնին կան.
զի ազդակին՝ առ ձայնիւ ունեան ցան.
Արա ջուրց՝ տարերց մասունք՝ ընկերընա կան
յորմէ մարմինք՝ տարրականաց՝ հաստատեա ցան
Ի ջուր և յօդ՝ բնութեան հողոյ՝ որ բնակա ցան
ցրտին և գէճ՝ բնութիւն ջրոյ՝ որք խառն ցան.

Բաղկացութիւնք՝ երկրիս կայից՝ կատարե ցան.
որք միշտ անշարժ՝ կայիւք շարժին՝ յեղյեղու կան.
Բայց և գծին՝ բնութիւն օդոյն՝ և ջերմա կան.
որ ընդ հրոյ՝ ջերմին և չոր՝ մերձաւորա ման.
Նմանապէս՝ կամարն երկնի՝ խորան ձգե ցան.
որք մշտաշարժ՝ շարժմամբ շրջին՝ անյեղա կան.
Յոր իմաստունք՝ ներհմտութիւն՝ յայս վարժե ցան.
և եղական՝ բնութեան գոյից՝ եղին սահ ման.
Բայց զբնութիւն ծնունդ շարժման՝ որք կայա նան
որք 'ի շարժուն՝ և յանշարժէց՝ տարերց ծը նան
Գնկօք թեւոց՝ կրկին բնութեան՝ միշտ ընթա նան.
որք 'ի ծովու՝ այս աշխարհիս՝ կան ծըփա կան.
Բերդ շարժելով՝ բոլորն երկնի՝ անդնդա կան.
միշտ պնդելով՝ զկայանս երկրի՝ անդադա կան.
Գեղեցկապէս՝ Թռչելով ամէն՝ հաստատա կան.
մէջ ցրուելով՝ ստորին բնութեան՝ ըստ տարրա կան.
Այնպէս անշարժ՝ բնութիւն երկրի որ գոյա ցան.
Ինքեամբ պրկեալ՝ պարարերէ՝ զերկնի շըր ջան.
Երկոքումըք՝ բնական կրիւքն՝ անլուծա կան.
միմեանց լինին՝ նիւթ և պատճառ՝ յարմարա կան.
Բացէից՝ տարերց մասունք՝ որք խառնե ցան.
անքակտելի՝ սիրով 'ի նոյն՝ յարմարե ցան.
Կատարեցան զարդք աշխարհիս՝ որք կա ցան.
յանմահ բանէն՝ արարչական՝ որով ստեղ ծան.
Նոյն արարիչն հրաշագործ՝ զարմանա զան.
մէջ թէ բանիւ՝ միայն արար՝ անքննա կան.
'Ի սմին արուեստս հանճարոյ՝ իմաստնա կան.
եղ 'ի բնութիւն արարածոցս դասա կան.
'Ի ստորին կոյս կայացեալ՝ հող ծանրա կան.
Մերձ առ նովին շարադասեալ՝ ջուր գիճա կան.

Խորանաձև՝ կամարացեալ՝ ու մերձնա կան.
զբոլորն բնաւ՝ շրջապատեալ՝ հուր կիզա կան.
՚Նման սրբին՝ քեզ յարայայտըս ցուցա կան.
յանօթ արկեալ՝ աւազ և ջուր՝ իւղ նիւթա կան.
Կիր ամանոյն՝ և նիւթ իւղոյն՝ առ մերոյ կան.
Ներքոյ աւազ՝ և զինի ջուր՝ գետեղա կան.
Սոպէից՝ բոլոր մասանց՝ պարագրա կան.
ող ընդ հրոյ՝ հողմոյ շնչմամբ՝ մեր ամբառ ճան.
Որով երկիրս՝ այս գնդաձև՝ առ կայա ցան.
՚ի միջոցի՝ աստ մնալով՝ անշարժա կան.
՚Ի սոյն և այլ՝ քեզ օրինակ՝ համանը ման.
դձու հաճու՝ առ գաղափարըս տեսա կան.
Շրջապատեալ՝ կեղևըն կարծր՝ և նիւթա կան.
որպէս հրեղէն՝ արփւոյն կամար՝ պարաձգե ցան.
Խորանն երկրորդ՝ զկնի սորին՝ օդոյն նը ման.
որ մինաձև՝ ընդ խեձեկոյն՝ ՚ի կառուց ման.
Այլ և երրորդ՝ է սպիտակուցըն ջրոյ նը ման.
և դեղնագոյնն՝ առ միջոցաւըն գնդա կան.
՚Նոյնպէս երկիրս՝ առ միջոցի՝ յարամնա կան.
անսիւն անենց՝ և ՚ի մերուստ անկախա կան.
՚Ի ներքուստ՝ հողմոյ հնչմունք՝ ընդդիմա կան.
և բընականն՝ իւր ծանրութիւն՝ ոչ ամբառ նան.
Ճաճասար՝ մեցակուսի՝ են զատա կան.
զառ ՚ի վեր՝ և ՚ի ներքուստ՝ և կողմնա կան.
Արդ ՚ի յերկրորդ՝ աճուըրն մեծ արարչու թն.
յորում հրաման՝ եղ յարարչէն՝ հաստատու թն.
Յօդոյ հնչմամբ՝ ջուրք ՚ի ջրոց՝ բաժանե ցան.
և հրեղէնի՝ արփւոյն կիզող՝ դիմակ ար կան.
Որպէս զի մի՝ զաշխարհ լուծցէ՝ տոչորա կան.
սաստիկ հըրատըն բոցագոյն՝ և կիզա կան.

Յուրս

Հուրտ բնութիւն՝ իւր ջուր լինի՝ կերակրա կան.
դի մի աշխարհ՝ ըմպառնսյի՝ 'ի հրոյն լուց ման.
Այդոքիկ երկլին միմեանց՝ են յատկա կան.
ապագապէս՝ շարժմամբ շրջին՝ անլռա կան
Պարառեալ՝ շրջափակեն՝ զգունդն երկրա կան.
և 'ի միմեանց՝ են հեռացոյն՝ նոյն չափա կան.
Լայնութիւն են՝ չորեք կուսի՝ եզերա կան.
և խորութիւն՝ ընդ բարձրութեանն զուգա կան.
Մեկնիս սոքօք՝ իմաստութիւն քեզ բաշխա կան.
որով պատմի՝ զփառս նոյ՝ անճառա կան.
Հրընթալ հոգւով՝ 'ի յարարած՝ այս եղա կան.
զովել զանեղն՝ 'ի յեղելոցս՝ անմահա կան.
Արդ մինչև ցայս՝ մեր խօսեցեալ՝ բանք նախնա կան.
յաղագս երկուց՝ կիսագնդացն՝ եռայարկ կան.
Նիւթ ցանկալի՝ ուսումնասէր՝ մտաց մարդ կան.
որով կրթին՝ վարժմամբ բանի՝ ուսողա կան.
Ուստի շարժմանց՝ զարդուն երկնից՝ տեղեկա նան.
և յարկածից՝ ապագայից՝ զգուշա նան.
Խուսեալ պատկ՝ բանից կարգի՝ յարմարա կան.
'ի զարդ գրոյ՝ բանասիրաց՝ յոյժ ըղձա կան.
Նոյն և նշան՝ անլուծ սիրոյ՝ եղբայրա կան.
և մեզ յանձնիւքս՝ ժամանակաց՝ պատճառ յիշ ման.

## ՚Նորին փոխչէուն՝ յաղագս Երինի.

Այն որ յառաջ՝ քեզ ձօնեցան՝ բան նախնա կան.
յաղագս երկուց՝ տրամադրութեան՝ անկիւնա կան:
Արդ՝ տարերացն դաս կարգի՝ միջնորդա կան.
և արուեստից՝ խառնուածոյն՝ յարմարա կան:
Նախ վերածին՝ գաղափարք ՚ի նոյն բան բաղձա կան.
և սկզբնականք՝ յաղագս երկնի՝ բառ ձեւա ման:
Այլ զի անձամբ՝ յայս ձեռնարկել՝ չեմք բաւա կան.
զհոգին իմ՝ վերածագրումք՝ մեզ օգնա կան
՚Նախ զառաջինն՝ զերկինն յիշեմ՝ բոլորա կան.
և համատարած՝ եւս անսահման՝ անքննա կան:
Ո՛չ որ և եթեր՝ զոր կարդացին՝ ազգն յունա կան.
և հուր թուեցաւ՝ այնք որ լեզուաւ՝ քաղդէա կան:
Խեղճ հրատ՝ նա բացայայտ՝ և պարզա կան.
մարմին անեղծ՝ և անչարչար՝ անհատա կան:
Աչէ ամենք՝ ոչ որ ՚ի նմին՝ այլ զատա կան.
զի հինգերորդ՝ է ՚ի չորեցս՝ առանձնա կան:
Աստղայց՝ նաւաթէն՝ անձնաւա կան.
ձգեալ ընդդէմ՝ լուսեղինացն՝ անմարմնա կան:
Ո՛չ բոլորս ընաւ՝ շրջապատեալ՝ զորէն ձեղու ան.
տրամադրեալ՝ առեալ շրջան՝ անսխա կան:
Նոյն բզգայս՝ կամիմ թուել՝ աւել բզ քան.
և զերկրորդն՝ սկսայց ձօնել՝ յօժարա կան:
Որ կոչեցաւ՝ երկին երկրորդ՝ հաստատա կան.
որ ՚ի ջրոյ՝ և ՚ի յօդոյ՝ անուանե ցան:
Ո՛չ պատեալ՝ ոչ թանձրացեալ՝ այլ լուծա կան
որպէս բղխուր այս որ առ մեզ՝ են հաստա կան:
Խաղ ՚ի յօդոյ՝ փքամանք եղեալ՝ որպէս խո րան.
զբնութեամբ՝ կամարացեալ՝ նման ձեղու ան:

՚Նոյն

՚Լուսնակս և հողմ՝ և օդ սփռեալ՝ տարածա կան
որպէս յանօթ՝ ինչ ժողովեալ՝ ՚ի նիւթս կան.
Եգձև ատեալ՝ վերինն երկնի՝ միջոց շրջա կան.
լուսաճառագք՝ եղեալ ատ ատն՝ և կայս բան.
Արամ՝ միայն՝ գիրք գործոյն՝ արարչա կան.
Թէ եղ ձեռն՝ ՚ի յերկնային՝ հաստատու թն.
Նայց որոշման՝ ասցս անդրէք՝ են զատա զան.
զոր մեծարակ՝ ատեղծն ունին՝ ընթացս բան.
Նշանատեղեան՝ անուանեցան՝ աստղ խա բան.
յանմեց փոխք՝ և պարունակք՝ պարբերա կան.
Մի քան բռնի՝ են գերապանց՝ վերադրա կան.
և ութերորդ՝ գունդն անմոլար՝ և բարձրա կան.
Ձոր կերպարանք՝ են կենդանեաց՝ երկասա ման.
որովք բոլոր՝ կամարն երկնից՝ յայտ չափե ցան.
՚Նոյն և երկրիս՝ հաստատու թն՝ անդի կա լան.
յոր բաշ ընակոտքն փորութն՝ արդեանց շան.
Օդ և աշխարհ՝ կերպարանօք՝ մարդոյ ցու ցան.
և երկնային՝ բոլորակին՝ վիճակե ցան
Խոյն է գլուխ՝ որ է աշխարհին պարակա կան. ♈
ցուլ պարանոյն՝ որ են կզակք՝ բարեկա կան. ♉
Երկուորեակն՝ ձեռքն են և ուսքն զամբա կան. ♊
և խեցգետին՝ լանջք կոչեցեալ՝ են հաստա տան. ♋
Առիւծն սիրտ՝ լեարդ և կողիցն՝ ասկա կան. ♌
կոյսն ներքին՝ որովայնին՝ եղզա կան. ♍
Արշիան որ է՝ կշռոյն երկուց՝ լերկա կան. ♎
լեարդ և կարիճն՝ է անդամոյն՝ ազգ կլեսա կան. ♏
Աղեղնաւոր՝ բարձքն և երկք՝ խաղա կան. ♐
և այծեղջիւր՝ ծունկք երկարին՝ ատրեւ տան. ♑
Ջրհոսն սրունքն՝ է աշխարհին եղխաա կան. ♒
և ձուկն թաթք՝ ոտից երկուց՝ է հնդկաս տան. ♓

Երկոտասան կենդանակերպքս՝ որ կոչե ցան.
ըստ համարոյ՝ ամսոց տարւոյն՝ համգունա կան
Եւ աստիճանքն՝ որ ՚ի նոսա՝ երեսնա կան.
աւուրց ամսոյն՝ են զուգաչափք՝ և համա բան
Իսկ բովանդակ՝ կամարն երկնից՝ համօրա կան.
երեք հարիւր՝ վաթսուն թուով՝ են աստի ճան.
Որովք և նոյն՝ թիւ համարոյ՝ աւուրց ծը նան.
յերկոտասան՝ ամիսք տարւոյն՝ որ գոյա նան.
Թողում ըզհետ՝ թիւ աւելեացն՝ անքննա կան.
զի խոր ունի՝ այն տեսութիւնքս մանա կան.
Դարձայց ՚ի նոյն՝ կերպ կենդանեացն՝ երկոտա սան.
և ըզբնութեանսն ճառեցից՝ նոցա սահ ման
♈ ♌ ♐ Խոյն և առիւծն՝ աղեղնաւորն՝ են ջերմա կան.
չոր և հրայինն՝ բնութեամբ իւրեանց՝ այրեցա կան.
♉ ♍ ♑ Ցուլն և կոյսն՝ և այծեղջիւրն՝ են հողա կան.
հով են և չոր՝ և երկրայինն՝ ցամաքա կան
♊ ♎ ♒ Երկաւորքն՝ կշիռ և ջրհոսն՝ են հողմա կան.
ջերմ և կակուղ՝ են բնաւորեալ՝ դալարա կան.
♋ ♏ ♓ Խեցգետինքն՝ կարիճն և ձուկն՝ են ցըրտա կան.
գէճ և ջրայինն՝ են զօրութեամբ՝ և զովա կան.
Արդ չորից՝ տարերց բնութեանցն զուգե ցան.
՚ի յարարչէն՝ իմաստութեամբ՝ կըշռե ցան.
Աստեղք մոլարք՝ որք Է նոսա՝ միշտ ընթա նան.
ունակացեալ՝ բնութեանց նոցին՝ զազդումն տան.
Արդա նըման՝ են չինաճածոց՝ որպէս ըզ տան.
որք և անշարժ՝ կան ՚ի տեղւոջըն յաւէտ եան.
Հոլաբք. Աստեղք նըման՝ ուղևորաց՝ են անցա կան.
որք ՚ի նոսա՝ իջևանին՝ և ընթա նան.
Յորժամ ՚ի նոյն՝ բնութիւն միմեանց՝ հանդիպա նան.
անձնունք բարեաց՝ և քաղցրութեան՝ տան մեզ նը շան.

Իսկ

Իսկ 'ի նոցունց՝ հակառակացըն սպառաչ ման.
ցուրտն ըզ ջերմոյ՝ չորն ըզ գինձի՝ խոնաւա կան.
Չյաւք և հարուածք՝ 'ի յաշխարհի՝ են ցուցա կան.
ըզ հակառակ՝ բնութեան նոցունց՝ որ վիճա կան.
Խողից ձառեալ՝ զերկար ասցին՝ զադգմանց ըզ քան.
զամանց անշարժ՝ աւել նոյա՝ կամ՝ շարժա կան.
Կամ՝ զոր 'ի մարդն՝ ասեն նըշան՝ և կերպա րան.
Թէ 'ի նոցունց կերպ կենդանեացըն ձեւա նան.
Դարձայց 'ի թիւ մոլորակացն 'ի եօթնա կան.
որք տանուտերաց՝ եօթանց դարուց՝ անուանե ցան.
Այլ և ըստ աւուրցըն շաբաթու՝ համարե ցան.
և ըզ պահու՝ ժամուց աւուրց՝ բաժանե ցան.
Նախ 'ի ներքին՝ գօտին սկսայց՝ խոնարհա կան.
որ և երկինք՝ լուսինն ասի՝ և կայա րան.
Սա ոսկենոս՝ անուն կոչի՝ ըզ յունա կան.
այլ և զամար՝ նա անուանի՝ ըզ տաճկա կան.
Իսկ մեք լուսին՝ ասեմք ոսմա՝ ըզ հայկա կան.
վասն զի լոյս՝ ունի նա յինքն՝ իւր սեփհա կան.
Այն աստեղանք՝ գնացից նորա՝ յայժ նըրբա կան.
զինա տեղեաւ՝ մերձ է յերկիր՝ և մօտա կան.
Աւստի յաւուրս՝ երկոււ և կէս՝ 'ի յընթաց ման.
զկենդանակերպըն կատարէ՝ և զատա ձան.
'Ի քսան և եօթըն թիւ աւուրցըն կատար ման.
դարձեալ 'ի նոյն՝ գայ վերըստին՝ տեղ ծընընդ եան.
'Ի քսան և ինն՝ օր և կիսոյն՝ աւարտա կան.
դարձեալ նորէ՝ զիւր հնութիւն մանկա կան.
Նայց ըզգամանէ՝ ամանք ասեն՝ որք գիտնա կան.
թէ ոչ ունի՝ լոյս յինքենէ՝ իւր բընա կան.
Այլ հայելի՝ ընդդէմ կացեալ՝ արեգա կան.
և 'ի նմանէ՝ ձառագայթէ՝ զլոյսն իւրա կան.

Կայ մեք ասեմք՝ յի սուրբ գրոց՝ ճշմարտա կան.
Թէ լոյս լուսեղէն է ծնեալ՝ արարչա կան.
Ոչ թէ մրմռի՝ մի փոքրագոյն՝ և սովորա կան.
ունի լուսոյ՝ աստուածորեալ՝ ՚ի յերկր որ ման.
Սրով ըղձերս խոկ ընթեռնուն՝ ՚ի ժամ մի թան.
՚ի կարգ գրոյն՝ գնա անմոլար՝ ՚ի տուղա կան.
Նոյա ոչ է գործեմք ամէն՝ զոյս մեզ ըղ բան.
և թէ ըղձոյ՝ լուսոյն ունի ընկրկէնա կան.
խոկ որ նշան՝ և գիծ ՚ի նմա՝ է գրչմա կան.
այն չորք երկրի՝ է և ծագու՝ որք կէրպա նան.
Ոչ հայելի՝ է աշխարհի՝ նա ցուցա կան.
նա և երկրի՝ չափ մեծութեան՝ աւէն ըղ բան.
Թէ օրէնան՝ այրոյ խնդրեա՝ հաւանա կան.
՚ի քարտաց՝ բազմաց ունի՝ ամփոփա կան.
Ոչ յամ՝ քաղաք փողոց էն յոգնա կան.
և միաչեռ՝ գնա աւանեն՝ գէմ յանդի ման.
Նշանս բնական. ՚Ի ժամանակս՝ անուրց ատելեաց՝ է մեզ նը շան.
և որք ուղղ՝ փոփոխութեց՝ ակնկալ նան.
Պատարագաց՝ և աղօթից՝ առ տէր կար գան.
՚ի բերմունք՝ չար պատահմանց՝ ըղձաշա նան.
Իւ որք ՚ի ծով նաւէլ կամին՝ վ ճաա կան.
՚ի նոյն անդրոյ՝ նաւահանգստին՝ գնանոա նան.
Այս ձմեռադարձ՝ հետ ունին՝ կամ ընտա կան
ամենն ՚ի տան՝ ըղձաշարժին՝ անվճառա կան
Իւ այս նշան՝ ահա ըն սերոյ՝ արարչա կան.
զի յուսոյն՝ մի կորեաւ՝ արդէն մարդ կան.
Կայն յանդառ՝ խոկ առնմէ՝ նշան ամ ման
և արեգական՝ ընթացից լինել՝ այդպէս կան
Ոչ ՚ի յանձն՝ նորին անձն՝ և լեա նան
և ՚ի մաչել՝ լուծանեն՝ և թաւլս նան.

Օնոյն

Զնոյն և 'ի ջուրըս անասնեա առ ծախս կան.
որք լինան' և թերանան' նըմին նը ման.
Նայց զարմանամ' եւ ո՞չ լուսնին եղեալ սահ ման.
որ մէջ ամենից' և հըռութեն' փափախա կան.
Զի օգտակար' նոլե թ ամենից' է երկրե րան.
որպէս պատանեաց' զաղաւկութե' ըղձարծրա կան.
Յարժամ' երկնից' լուսինըն մերձ' արեգա կան.
նմանութեն' լինի լուսնոյն' ունակա կան.
Զի զբօսորակ լուսնոյն ունի միրոյ կող ման.
և այն ընդդէմ' արեգակունն 'ի հայեց ման.
Իսկ յատանել' նըմին 'ի բոյց հեռագա կան.
